# Շաբաթական ակնարկ 17.02.25

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծություն՛ը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում**, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, **հետևաբար բախվում են ներդրումային ռիսկերի հետ,** ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը**: Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով

# Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ

ԱՄՆ-ի բոլոր հիմնական ինդեքսները դրական եկամուտներ արձանագրեցին, բացառությամբ Russell 2000-ից, որը մնաց անփոփոխ:

META-ն աճեց 20 օր անընդմեջ՝ դառնալով NASDAQ-ի ամենաշատ աճ արձանագրած բաժնետոմսը համեմատած այլ բաժնետոմսերի հետ:

Դոլարը հասավ իր ամենացածր մակարդակին՝ 2024 թվականի դեկտեմբերից ի վեր:

Նավթի գները նվազեցին՝ Թրամփի և Պուտինի բանակցություններից հետո:



# Ինդեքսներ

S&P500-ի արդյունքը՝ +1.49%

NASDAQ-ի արդյունքը՝ +2.91%

Dow Jones-ի արդյունքը՝ +0.60%

Russell 2000-ի արդյունքը՝ -0.01%

# Ինդեքսներ

Մի շարք փաստեր

- Անցած շաբաթվա ընթացքում բոլոր հիմնական ԱՄՆ ինդեքսները գրանցեցին դրական եկամուտներ, բացառությամբ Russell 2000-ի, որը գրեթե անփոփոխ մնաց:
- CPI և PPI տվյալները սպասված արդյունքներից ավելի վատ ցուցանիշ արձանագրեցին, ինչի արդյունքում շուկան կանխատեսեց, որ տոկոսադրույքների նվազումը չի փոփոխվի:
- Այնուամենայնիվ, մանրածախ վաճառքները նույնպես սպասվածից ցածր էին՝ ցույց տալով բացասական եկամուտներ: Սա փոխեց սկզբնական կանխատեսումները՝ բարձրացնելով տոկոսադրույքների կրճատման վերաբերյալ սպասումները:
- Ի հավելումն՝ Թրամփի և Պուտինի բանակցությունները պատերազմի ավարտի շուրջ ամրապնդեցին ներդրողների վստահությունը՝ նպաստելով շուկայի ավելի կտրուկ աճին:



# Բաժնետոմսերի շուկա | Ոլորտներ և META

Գրեթե բոլոր ոլորտները վերջին շաբաթվա ընթացքում արձանագրեցին դրական միտում, բացի առողջապահության ոլորտից: Այս կոնտեքստում ապրանքահումքային և տեխնոլոգիաների ոլորտները ապահովեցին լավագույն ցուցանիշներ: Տեխնոլոգիական ոլորտն աճեց սպասվող աճի տոկոսի բարելավման և զուտ շահույթի դրական միտման արդյունքում:

META-ն 20 օր անընդմեջ աճ գրանցեց՝ նշանավորելով ամենաերկար հաղթարշավը NASDAQ-ի որևէ այլ ընկերության բաժնետոմսի պատմության համեմատ: Սա, իր հերթին, բարձրացրեց MAG 7-ի բաժնետոմսերի գները՝ հաղթահարելով զսպման միջակայքը:



**Coca-Cola (KO)-ն** գերազանցել է սպասվող EPS-ը և եկամուտը համապատասխանաբար 6.35%-ով և 6.55%-ով: Բացի այդ, ընկերությունը եռամսյակում գրանցել է զուտ վաճառքի 6% աճ, իսկ իր միավոր ապրանքի ծավալն աճել է 2%-ով՝ վերականգնվելով նախորդ եռամսյակի անկումից: Այս արդյունքներն արժանացան շուկայի դրական արձագանքին:

**CVS Health Corporation (CVS)-ը** գերազանցել է սպասվող EPS-ը 29.56%-ով, իսկ եկամուտների կանխատեսումները՝ 0.85%-ով: Ընկերությունը նաև տրամադրել է 2025 թվականի համար ճշգրտված շահույթի կանխատեսում՝ $6.00 մեկ բաժնետոմսի դիմաց: Բացի այդ, CVS-ն իրականացրել է ռազմավարական փոփոխություն կառավարման շրջանակում, ինչի հետևանքով ծախսերը կրճատվել են $2 միլիարդ դոլարի չափով: Այս ամենը նպաստել է ընկերության բաժնետոմսերի գնի աճին:

**Cisco Systems (CSCO)-ը** գերազանցել է սպասված ինչպես EPS-ը, այնպես էլ եկամուտները: Բացի այդ, ընկերությունն ավելի մեծ վստահություն ձեռք բերեց, որբ Cisco-ն ձեռք բերեց Splunk-ը: Սա սպասվածից ավելի արագ կերպով նպաստեց մեկ բաժնետոմսին բաժին ընկնող եկամտի աճին: Առանց Splunk-ի ազդեցության, Cisco-ի ընդհանուր եկամուտը տարվա կտրվածքով կկրճատվեր 1%-ով, ինչը, սակայն, տեղի չունեցավ, այլ ընկերության բաժնետոմսի գինը բարձրացավ Splunk-ի ձեռքբերման հաշվին:

**McDonald's (MCD)-ը** չկարողացավ բավարարել ինչպես սպասվող EPS-ը, այնպես էլ սպասվող եկամուտը: Այնուամենայնիվ, ընկերության բաժնետոմսերը գրանցեցին դրական արդյունքներ, հավանաբար 2024 թվականին տեղի ունեցած բացառիկ իրադարձությունների՝ E. Coli-ի դեպքի և Կալիֆոռնիայի հրդեհների ազդեցության պատճառով, որոնք, ամենայն հավանականությամբ, չեն կրկնվի: Բացի այդ, McDonald's-ի երկու միջազգային ստորաբաժանումներն էլ աճ են արձանագրել, ինչը նույնպես աջակցել է ընկերության ցուցանիշներին:

# ԱՄՆ պարտատոմսերի շուկան

Մի շարք փաստեր

- Երկարաժամկետ պարտատոմսերից բացի (մնացել են անփոփոխ), ԱՄՆ պարտատոմսերի շուկան ունեցել է դրական շաբաթ՝ բոլոր պարտատոմսերի եկամտաբերությունները նվազել են (գները բարձրացել են):

- Եկամտաբերության վրա ազդող հիմնական գործոնը մանրածախ վաճառքների տվյալներն էին, որոնք ցույց տվեցին ոլորտի դանդաղում: Բացի այդ, մաքսատուրքերի նախագիծը նույնպես ազդեցություն ունեցավ՝ խոչընդոտելով ԱՄՆ-ի որոշ ոլորտների աճին: Սա շուկային ստիպեց ենթադրել, որ դրան ի պատասխան Դաշնային պահուստային համակարգը կնվազեցնի տոկոսադրույքները:



# ԱՄՆ պարտատոմսեր, Դոլարի ինդեքս և տոկոսադրույքի սպասումներ

Մաքստուրքերի նոր ծրագրի և մանրածախ վաճառքների համակցված ազդեցությունը զգալի ազդեցություն ունեցավ տոկոսադրույքների կրճատման կանխատեսումների վրա: Միայն մեկ շաբաթվա ընթացքում տոկոսադրույքի կրճատման կանխատեսվող սպասումն աճել է՝ 25 բազիսային կետից հասնելով գրեթե 40 բազիսային կետի:

Տոկոսադրույքների կրճատման կանխատեսումների փոփոխության արդյունքում դոլարը անկում գրանցեց վերջին հինգ շաբաթների ընթացքում չորրորդ անգամ՝ հասնելով իր ամենացածր մակարդակին 2024 թվականի դեկտեմբերից ի վեր:

Ոսկու գինը իջել է ուրբաթ օրը՝ անցնելով $2,900 մակարդակից ներքև: Այնուամենայնիվ, այն դեռևս շաբաթական աճ է գրանցել: Գնի անկումը պայմանավորված էր վաճառքով, երբ ներդրողները սկսել էին շահույթ ստանալ տնտեսական տվյալների տարբեր ու հակասական արդյունքների ֆոնին:

Նավթային գները նույնպես անկում են գրանցել շաբաթվա ընթացքում հիմնականում Ռուսաստանի և Ուկրաինայի միջև պատերազմի հավանական ավարտի պատճառով, որտեղ Թրամփի միջամտությունը ցույց է տվել տեսանելի առաջընթաց՝ վեճի լուծման հարցում:



Մի շարք փաստեր

- Երկու շաբաթ տևողությամբ բացասական արդյունքներից հետո կրիպտոարժույթների շուկան վերջապես աճել է:
- Բիթքոյնը ներկայումս տատանվում է իր՝ 50-օրյա և 100-օրյա շարժական միջինների (DMA) միջև:
- Այս շաբաթվա գլխավոր նորությունը SEC-ի առաջընթացն էր Grayscale-ի XRP ETF-ի մասով, որը բարձրացրեց XRP-ի գինը՝ վերադարձնելով այն մոտ $3 մակարդակին:

Ըստ Barclays-ի, քաղաքական անկայունությունը կհանգեցնի ավելի մեծ տնտեսական անորոշության, ինչն իր հերթին կհանգեցնի շուկայի տատանմանը: Ավելին՝ բարձր տատանողականությունը սովորաբար հանգեցնում է բաժնետոմսերի ավելի ցածր գնահատման ցուցանիշների:



KOBEISSI LETTERS-ի համաձայն՝ երկարաժամկետ բաժնետոմսերի ETF ակտիվները հասել են ռեկորդային $95.0 միլիարդ սանդղակին անցած շաբաթվա ընթացքում:
Համեմատության համար, 2021 թվականին բաժնետոմսերի շուկայի աճի ժամանակ երկարաժամկետ ETF ակտիվները 29%-ով ցածր էին: 2022 թվականի երրորդ եռամսյակից սկսած՝ ֆոնդերում ածանցյալ գործիքներով երկար դիրք բացված ակտիվների ծավալը եռապատկվել է: Մինչդեռ, լևերիջով կարճ դիրք բացված բաժնետոմսերի ETF ակտիվների ծավալը նվազել է $13.3 միլիարդով:



Ըստ Charlie Bilello-ի, S&P 500-ի 75%-ը արդեն ներկայացրել են իրենց ֆինանսական հաշվետվությունները, և S&P 500-ի գործառնական եկամուտները պատրաստվում են հասնել նոր ռեկորդային մակարդակի (TTM), ինչը նշանակում է 10%-ով աճ նախորդ տարվա համեմատ:



# Q4 – 2024 Ֆինանսական հաշվետվությունների օրացույց

Այս շաբաթ, 394 ընկերություններ պատրաստվում են հրապարակել իրենց 2024 թվականի չորրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները: Այդ ցանկում են նաև այնպիսի հայտնի ընկերություններ, ինչպիսիք են՝ Walmart Inc. (WMT), Alibaba Group (BABA), HSBC Holdings (HSBC) և այլ ընկերություններ:

#1 / 394 Total  save as portfolio | create alert  Refresh: 3min | off  Page 1 / 20

| No. | Ticker | Company | Sector | Industry | Country | Market Cap | P/E | Price | Change | Volume |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | WMT | Walmart Inc | Consumer Defensive | Discount Stores | USA | 843.91B | 43.14 | 105.05 | 1.39% | 12,554,599 |
| 2 | BABA | Alibaba Group Holding Ltd ADR | Consumer Cyclical | Internet Retail | China | 286.23B | 24.54 | 119.54 | 1.02% | 34,248,560 |
| 3 | HSBC | HSBC Holdings plc ADR | Financial | Banks - Diversified | United Kingdom | 197.08B | 9.10 | 55.19 | 0.20% | 1,955,879 |
| 4 | BKNG | Booking Holdings Inc | Consumer Cyclical | Travel Services | USA | 165.77B | 33.99 | 5008.70 | -0.19% | 223,277 |
| 5 | ANET | Arista Networks Inc | Technology | Computer Hardware | USA | 138.26B | 52.69 | 109.75 | 0.10% | 9,599,403 |
| 6 | MDT | Medtronic Plc | Healthcare | Medical Devices | Ireland | 118.23B | 28.14 | 92.20 | 0.93% | 5,990,023 |
| 7 | MELI | MercadoLibre Inc | Consumer Cyclical | Internet Retail | USA | 104.75B | 72.89 | 2066.15 | 2.45% | 294,279 |
| 8 | ADI | Analog Devices Inc | Technology | Semiconductors | USA | 103.86B | 63.84 | 209.34 | 2.05% | 3,133,862 |
| 9 | SO | Southern Company | Utilities | Utilities - Regulated Electric | USA | 95.08B | 20.22 | 86.78 | -0.03% | 4,396,182 |
| 10 | CDNS | Cadence Design Systems, Inc | Technology | Software - Application | USA | 81.23B | 77.88 | 296.16 | 0.72% | 1,792,671 |
| 11 | NTES | NetEase Inc ADR | Communication Services | Electronic Gaming & Multimedia | China | 65.23B | 17.80 | 104.81 | -3.97% | 1,903,654 |
| 12 | CPRT | Copart, Inc | Industrials | Specialty Business Services | USA | 57.65B | 41.93 | 59.83 | 1.37% | 3,440,789 |
| 13 | CVNA | Carvana Co | Consumer Cyclical | Auto & Truck Dealerships | USA | 56.56B | 32428.57 | 272.40 | 1.67% | 1,699,980 |
| 14 | NEM | Newmont Corp | Basic Materials | Gold | USA | 54.36B | - | 47.75 | 2.01% | 11,611,063 |
| 15 | XYZ | Block Inc | Technology | Software - Infrastructure | USA | 52.24B | 47.36 | 84.29 | 1.57% | 4,520,820 |
| 16 | MFC | Manulife Financial Corp | Financial | Insurance - Life | Canada | 51.93B | 14.24 | 29.64 | 0.14% | 6,649,417 |
| 17 | LNG | Cheniere Energy Inc | Energy | Oil & Gas Midstream | USA | 47.11B | 13.40 | 209.99 | 0.32% | 2,577,395 |
| 18 | OXY | Occidental Petroleum Corp | Energy | Oil & Gas E&P | USA | 44.93B | 12.47 | 47.88 | 0.10% | 8,421,441 |
| 19 | TRGP | Targa Resources Corp | Energy | Oil & Gas Midstream | USA | 44.58B | 36.83 | 204.42 | 1.91% | 1,023,361 |
| 20 | PWR | Quanta Services, Inc | Industrials | Engineering & Construction | USA | 42.93B | 53.74 | 290.86 | -2.50% | 1,873,194 |

Filters: earningsdate:nextweek  export

## Այս շաբաթվա ԱՄՆ-ի տնտեսական զեկույցները

| | | | |
|---|---|---|---|
| **MONDAY, FEB. 17** | | | |
| | President's Day holiday | | |
| 9:30 am | Philadelphia Fed President Patrick Harker speaks | | |
| **TUESDAY, FEB. 18** | | | |
| 8:30 am | Empire State manufacturing survey | Feb. | -12.6 |
| 10:00 am | Home builder confidence index | Feb. | 47 |
| 10:20 am | San Francisco Fed President Daly speaks | | |
| **WEDNESDAY, FEB. 19** | | | |
| 8:30 am | Housing starts | Jan. | 1.5 million |
| 8:30 am | Building permits | Jan. | 1.48 million |
| 2:00 pm | Minutes of Fed's January FOMC meeting | | |
| **THURSDAY, FEB. 20** | | | |
| 8:30 am | Initial jobless claims | Feb. 15 | |
| 8:30 am | Philadelphia Fed manufacturing survey | Feb. | 44.3 |
| 10:00 am | U.S. leading economic indicators | Jan. | -0.1% |
| **FRIDAY, FEB. 21** | | | |
| 9:45 am | S&P flash U.S. services PMI | Feb. | 52.9 |
| 9:45 am | S&P flash U.S. manufacturing PMI | Feb. | 51.2 |
| 10:00 am | Consumer sentiment (final) | Feb. | 67.8 |
| 10:00 am | Existing home sales | Jan. | 4.24 million |

060408005, 060408002 ,010592301
Երևան, Բուզանդ 87, 85 գրասենյակ
brokerage@araratbank.a